ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի քննությունը վերսկսելու մասին

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/5054/02/19 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ի, 15.04.2021 թվականին կայացված որոշումը՝ հայցն առանց քննության թողնելու մասին և Դատարանի 27.02.2019 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, որով արգելվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերացվել է

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6406-2019 գրությամբ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի քննությունը վերսկսել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ